ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ և ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2024

Պատասխանատու՝ **Նարինե Թադևոսյան**

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024 թ. Տավուշի մարզում ըստ փորձարկվող նոր ծրագրի կազմված ‹‹Հայոց պատմություն›› առարկայի միասնական քննության թեստերի առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, կառուցվածքը:

2024 թ. միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թ. մարտի 30-ի N 33-Ն հրամանը, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց պատմություն» առարկայի 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչները:

Ուղեցույցում ներկայացված են 2024 թ. միասնական քննության թեստերի կառուցվածքը, առաջադրանքների կառուցվածքային տեսակների համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տեսակները, պատասխանների ձևաթուղթը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

I ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Քննական թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և ներառում է 70 առաջադրանք:

Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են պետական ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին:

Միասնական քննությունը ներառում է Ա և Բ մակարդակները:

Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից:

Ընտրովի պատասխանով (թեստի հ.հ. 1-34 և 46-57 առաջադրանքներ) և կարճ պատասխանով (հ.հ. 35-44 և 58-69) առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ամբողջական ճիշտ պատասխանին՝ 6 միավոր (հ.հ. 45 և 70):

Թեստի ընդհանուր միավորը այդպիսով կազմում է 80:

Աղյուսակ 1

Թեստի առաջադրանքների կառուցվածքային տեսակների համամասնությունը

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները	Առաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
Ընտրովի պատասխանով	46	46
Կարճ պատասխանով	22	22
Պնդումների փունջ	2	12
Ընդամենը	70	80

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Հայոց պատմություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննության թեստերում ընդգրկված են առարկայական նոր չափորոշիչներին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ.